

ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՄՆԵՐԸ

(Բացման խօսք Գ. ԻՍԱԺԱԿԻ)

Տիկիներ եւ պարոններ,

Հոս հաւաքուած ենք հայ գրականութեան վերջին արտադրութիւններէն մին քննադատելու. արտադրութիւն մը՝ որ այնքան յուզեց մեր Կովկասեան եղբայրները³: Գիտեմ՝ ձեզմէ շատերը պիտի մտածեն թէ հիմա կը սկսին յարձակումները, կծու սլաքները: Սակայն կը սխալիք:

Պարոնեան իր *Ազգային ջոջերու*⁴ մէջ խօսքն ուղղելով Ներսէս Վարժապետեանի հոյակապ անձին, կ'ըսէ մօտաւորապէս սա բառերը. «Ո՛վ պաշտելի ուսուցիչս. թող որ արեւուն վրայ բիծեր ալ տեսնեմ»⁵: Ու այնուհետեւ կը սկսի միայն ու միայն բիծերը տեսնել: Թողունք երգիծաբանին ըսելու միայն ծաղրելին, մութը, թողունք որ ան ձաղկելով ու ստրակելով ընէ իր շինարար գործը. իսկ մենք մօտենանք առաջադրուած գրական գործին առնաբար, քաղաքացիական քաջութիւնով. ըսենք լաւն ալ, վատն ալ: Ցաւելով ըսենք թերութիւնները: Բաւ է որ լսողը հասկնայ թէ՛ հեղինակը ստորնացնելու համար չէ որ կ'ըսենք թոյլ ու թերի կողմերը. բաւ է որ քննադատուողը ըմբոնէ թէ բարեկամաբար կը քննադատուի եւ ոչ թէ թշնամաբար:

Ծանր է մեր գործը: Հայ Պառնասի գաւակներէն շատերը իսկական բանաստեղծ չեն: Անոնք յաճախ քնարի փոխարէն հրապարակագրի գրիչը եւ քարոզչի մականը կ'առնեն ձեռք. ու փոխանակ երեւակայութեան՝ կը գործէ սառ լօժիքը, փոխանակ պատկերներու՝ սիլլօժիգմը, մինչդեռ բանաստեղծը – Սէնթ Պէօֆի, Ժօրժ Պրանտէսի եւ ռուս քննադատ Պիլիսկիի ըսածին պէս – «կը խօսի եւ կը տրամաբանէ պատկերներով»⁶:

Շանթի *Հին աստածները*, ամբողջովին պատկերներով արտայայտուած լօժիք մըն է: Ատկէ աւելին, ան ցոլացուցեր է հերոսին՝ Աբեղային ներաշխարհը. անոր